

չահաւոր եղան. որովհետեւ առուարի լայնա-  
 ծաւալ երկիր մը բացուեցաւ այնուհետեւ, որ  
 ցայն վայր յամառ փակուած էր օտարաց առ-  
 ջեւ: Բայց այս ալ յաղթականն Անգղիոյ ար-  
 դիւնքն է որ ալ այնուհետեւ ափիոնի գործա-  
 ծութիւնը՝ բովանդակ ճենաստանի մէջ սիրալիր  
 ու գրկատարած ընդունելութիւն գտաւ: Սա-  
 կայն ափիոն մատակարարողներն անկէ ետեւ  
 միայն Անգղիացիք չեղան, ճենացիք ալ սկսան  
 խաշխաշ սերմանել եւ ափիոն շինել, այնպէս  
 որ այսօր իսկ մաքրեր գրաւող օրւան խնդիրն է՝  
 թէ անգղիական — արեւելեան — Տնդկական  
 վաճառարեւութիւնն երբ պիտի դադրի: Սոյն  
 ժամանակին վրայ 50 տարեաց շաբք մ'անցնե-  
 լէն ետեւ՝ ափիոնը ճենական ժողովրդեան մէջ  
 կենաց անհրաժեշտ կարեւոր ապրանք համա-  
 բուեցաւ, որ սակայն դժբախտարար կեանքն  
 ո՛չ կը նորոգէ եւ ո՛չ կը զօրացնէ, այլ մա-  
 նաւանդ թէ անգուլ եւ անդադար կը կրծէ  
 կենաց թերն եւ երբեմն բոլորովն իսկ կը խան-  
 գարէ:

Բայց ծխելու որոշուած ափիոնն իսկապէս  
 տարբեր է անկէ՝ որ նոյն անուամբ մեր գեղա-  
 նոցաց մէջ իբր կարեւոր դեղ կը վաճառուի:  
 Ճենաց ափիոնն առանձինն պատրաստութիւն  
 ունի. բոս կարի կը մաքրեն, եւ գլխաւորարար  
 մէջի բնափիոնին մէկ մասն կը հանեն, որով  
 ծխողները բազմադիմի չարիքներէ ազատ կը  
 մնան. մինչդեռ յառաջագոյն՝ երբ խաշխաշի  
 մուղն անպատրաստ կը ծխուէր, անկէ ծագած  
 չարեաց շաբքը շատ երկար էր: Ափիոնը դեռ  
 ծխելու յարմար չեղած՝ չորս գործողութիւնէ  
 կ'անցնի. նախ՝ խաշխաշի մուղը ջրոյ մէջ կը լուս-  
 ցուի, որով ափիոնին մէջի լոյծ մասուկն զուրս  
 կ'երլն. ապա ելած մուղը կ'ևսացուի, կը քա-  
 մուի եւ վերջապէս շոգիացնելով՝ կակուղ  
 խմորի հաստատութեան չափ կը թանձրացուի  
 եւ կը չորցուի: Ասով ափիոնը կը ստանայ այն  
 յատկութիւններն՝ որ մարդկան շնչափողին վրայ  
 հաճոյական ու հեշտալի ազդեցութիւն կ'ընեն:  
 Այս եղանակաւ պատրաստուած գոյացութեան՝  
 ծխողները ջանքով անուշը կու տան, որ շատ կը  
 նմանի շաքարի գիրտէն շինուած շարբրի  
 (mélasse), բայց անկէ աւելի հաստատուն եւ  
 պինդ է:

(Շարբրի-մէլէս):



Հ. Գ. Բ.

Ա Ձ Գ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԳՐԱՆՍԻՆՈՒՆԻՈՅ ՀԱՅՈՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

Աչքոյն երգեր:

Կը ներկայացնեն՝ ընթերցողաց, քանի  
 մ'ազգային երգ, Կերբայի Հայոց այն երգերէն,  
 զորոնք մեր պապերը մեզի՝ իրենց թոռներուն թո-  
 ղուցին. ձայնագրելով նաեւ անոնց եղանակը.  
 Առաջինն ըլլայ, այբուբենի կարգաւ  
 դրուած, ու անտարակոյս վաճառականի մը բեր-  
 նէն ելած ընդարձակ երգն, որ իրացընէ կին-  
 դանի գունով ու ձեռքով շօշափելու կերպով  
 առջեւնիս կը դնէ, թէ առուտուրն որչափ մտա-  
 տանջութեամբ, նեղութիւններով ու աշխա-  
 տանքով կը քալէ. եւ թէ ինչչափ քիչ ու ան-  
 տեսանելի շահաբերութիւն ունի:

Ա. Պաղըրիքնուն զրոյ պար.

Ա- մէն դի- հաց թէ որ նայ-իս  
 Աշ- խար-հըս քո- լոր-ման թար թիս. նա  
 է-կօ որ հիւ-պիկ լը-սիս. Պա-գըր- կը-նուն  
 բա-նը ցաւ-իս:

Ամէն դիաց թէ օր նայիս.  
 աշխարհս բոլորման թարթիս.  
 նայ եկօ որ հիմպիկ լըսիս  
 պաղըրկընուն բանը ցաւիս:

Բեմի՛ 1 դաս մը կի խօճանան.  
 բայց ալ շատը կի աղբըտնան.  
 մագար՝ 2 ինտաս ինտաս՝ 3 դարնան.  
 ամէնը չիալին բիմի բան:

Գիմ՝ 4 տեսգուլ՝ 5 ալ սըլիդ՝ 6 կանին.  
 ու պարէպար կի ծեծկըվին.  
 երկըրաց երկիր կի քային  
 որ հարկիւոր իրենք ապրին:

Դաս մը բուսդան՝ 7, դաս մը պէչը,  
 ալ շատը շօգօտոյները՝ 8,  
 պօղղը՝ 9, օտար քաղքըները,  
 եւ գեղըանը, գիգիճարները՝ 10:

1 Սողոգ, իրա է. — 2 թէպէտ. — 3 սողին անդին.  
 — 4 Սողոգ է, թէպէտ. — 5 բաւական. — 6 ջանք, սըլիս  
 անել — ջանալ. — 7 արօտաստան, արօտական. — 8 անա-  
 վաճառ. — 9 խանութ, կրպակ՝ երէք բառն ալ հունգա-  
 րերէն է. — 10 փերեզակ. մանրափաճառ.